

4958

299.19  
4.20

1911

2001

ԱՐՏԱՑՈՒԹԻՒՆ Ի ԳՐՈՅ

# ՅՈՒՂԱՐՉԱՆ

233

ԳՐԱԿԱՆ ՓՈՂՈՎԱՃՈՅ ԱՌԹԻԻ 100ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԻՆԻ ՀԱՅՏԱՏՄԱՆ  
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ի ՎԻԵՆՆԱ

(1811—1911)

ԵՒ 25ԱՄԵԱՅ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ “ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ,, ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻ  
(1887—1911)

ՀՐԵՑՈՐԵԿԵԱԼ Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԲՈՆՆԱԳՈՒԹԵԱՄՐ ԸՆԹԱՑՈՅ  
“ՀԱՆԴԵՍԻ”, ԵՒ ՀԱՅԵՐԵՆԱԳԵՏ ԲԱՆՈՒԼՈՅ



ՎԻԵՆՆԱ 1911

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

SONDERABDRUCK AUS

## HUSCHARDZAN


FESTSCHRIFT AUS ANLASS DES 100JÄHRIGEN BESTANDES DER  
 MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN

(1811—1911)

UND DES FÜNFUNDZWANZIGSTEN JAHRGANGES DER  
PHILOLOGISCHEN MONATSSCHRIFT „HANDES AMSORYA“

(1887—1911)

HERAUSGEGEBEÑ VON DER MECHITHARISTEN-KONGREGATION UNTER MITWIRKUNG  
 DER MITARBEITER DER MONATSSCHRIFT UND ZAHLREICHER ARMENISTEN



WIEN 1911

MECHITHARISTEN-BUCHDRUCKEREI

299.19  
Ա-90





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ "ՅՈՒՇԱՐՁԱՆ,, ԻՆ

Ակնարկ մը Ահենական Միմիթարեան Միաբանութեան հարիւրամեայ զրծունէութեան վրայ:

1. Գալէմբեարեամ Հ. Գ.՝ Ազաթանգեղոսի կրնազիր բնագիրը:
2. Նորայն Ն. Բիռաղանցի Անութիւն Մալխասեան հրատարակութեանց Ազաթանգեղոսի եւ Հ. Փարակեցւոյ:
3. Weber Prof. Dr. S.: Ueber die Versuche, den Verfasser der Invektiven gegen die Armenier . . . zu bestimmen (= Սիմ. Վերէ Բանուն Սահակայ Կաթողիկոսի ընդէմ Հայոց երկու հակածառութեանց Տեղինակն որոշելու փոքր մը):
4. Խաչաթ և անց Պոռֆ. Գ.՝ Ցովակիմ Շոէօլէրի թութերից:
5. Peeters P.: La passion arménienne de S. Serge le Stratélat (= Պէտք և Պ. Ս. Սարգսի գործակարի հայերէն վկայարանութիւնը):
6. Conybeare F. C.: The age of the old armenian version of Irenaeus (= Կոնյակի Պ. Ս. Իրենէոսի գրուածոց հայերէն թարգմանութեան ժամանակը):
7. Մոռնաւատ Փ.՝ Վեշտասան ասացուածք Եփրեմի վասն Նիկոլինեայ քաղաքի:
8. Meillet Prof. Dr. A.: Remarques sur les l de l'arménien classique (= Մէլլէ Ա.՝ Դիտողութիւններ հայերէն և ուղարկու վրայ):
9. Lüdtke Dr. W.: Zum armenischen und lateinischen Physiologus (= Լիւդտկէ Ա.՝ Հայերէն եւ լատիներէն Բարուախոսի վրայ):
10. Մաշին և սեպ Ա.՝ Սի առեղծուած նարեկի մէջ:
11. Seidel Dr. E.: Ein neues Exemplar des alten Ayteark' und Algemeines zu seinem medizinischen Abschnitte (= Սայդ Է.՝ Հին Աղթաքի նոր օրինակ մը եւ անոր բժշկական հասուածներու վրայ ընդհանուր դիտողութիւններ):
12. Տէր - Պոռն սեպ Գ.՝ Խախմի Հայոց հոգեպաշտութեան ըրջանից:
13. Համբարձուած Հ.՝ Հայոց Արարացոց իշխանութեան տակ:
14. Tournebize Prof. Fr: Schah Abbas I. et l'émigration forcée des Arméniens de l'Ararat (= Տուռնեզ Ֆ.՝ Շահաբաս Ա. եւ Արարատի Հայոց բռնի զալթականութիւնը):
15. Lehmann-Haupt Prof. Dr. C. F.: Die chaldische Keilinschrift von Kaissaran (= Լեմման-Հայպ Ք. Փ.՝ Կասարանի Խալդիական սեպագրութիւնը):
16. Մէկնէլի Հ. Ա.՝ Արդի հայերէնի անցեալը, ներկան եւ ապագան:
17. Zanolli Prof. A.: Qualche osservazione sulla formazione del plurale nell' antico Armeno (Ժանոլլի Ա.՝ Փանուի մը Նկատողութիւններ ին հայերէնի յոգնակի ձեւին վրայ):
18. Գարուի և հայերէն լեզուն գեղագիտական տեսակէտով:
19. Pedersen Prof. Dr. H.: Armen. "Կորիւն,,:
20. Առնես Հ. Ա.՝ Այոշ բաներ:
21. Marquart Prof. Dr. Jos.: Armenische Streifen. I. Historische Data zur Chronologie der Vokalgesetze. II. Zur Liste der Provinzen von Xorasan (Մարքարտ Յ. Հ.՝ Հայկական գծեր. Ա. Հայերէն ճախական օրինաց ժամանակագրութեան համար պատմական տունաւեր: Բ. Խորասանի գաւառներու ցանկը):
22. Թոռն սեպ Հ. Ա.՝ Ստեփանոս Բժիշկ Շէնքիմանեան:
23. Հարդ աննամ Հ. Ա.՝ Ա. Անդրէն, մասնիկը դասական հայերէնի մէջ:
24. Kraelitz-Greifenhurst Dr. Fr. v.: Ein Brief an den armenischen Hofkaplan Wardapet Nerses in Wien aus dem Jahre 1697 (Կրելից Գ. Դարձ Փ. Ա. Անդրէն Փ.՝ Թուղթ մը ուղղուած առ Ներսէս Արդ. Դրան երէց ի Վենենա, յամէ 1697):

## ՑՈՐՔ ԱՍՏՈՒԱԾ ՀԻՆ ՀԱՅՈՅ ՑԱՅՈՅ

Ի ՆԿՈՂԱՑՈՍ ԱԴՐՈՑՑ

60  
60  
60  
60  
60

Ազգային աւանդութեան համաձայն, Տողքը Հայոց նախարարութիւններից մէկի նախահայրն է: Խորենացու ասելով, նա Հայկի սերունդիցն է, Պատքամի զաւակը եւ Հայկակի թոռը: Հետաքրքրական է մանաւանդ նրա նկարագիրը, որ աւանդում է մեզ նոյն պատմագիրը: Տողքը մի հսկայ էր, խոշորագեղ, բարձր, կոպտարանձն, տափակաբիթ, խորակն եւ գմնահայեաց, վիթխարի հասակով եւ ուժով: Արտասովոր տգեղութիւնը ժահադիմութիւնը, նրա յատկութիւններից մին էր, որի պատճառով կոչուում էր նաեւ Անգեղեայ: Վաղարշակ թագաւորը նրան նշանակում է արեւմտեան կողմի սահմանակալ եւ նրա տոհմը հրէշաւոր այլանդակութեան պատճառով անուանում է Անգեղ տուն: Տողքը Հայոց համար նոյնն էր, ինչ որ Որոստոմ Սագճիկը (Սագաստանցին) Պարսից, որի մասին պատմում էին, որ Հարիւր քսան փղի ոյժ ունէր: Հայերը Տողքին վերագրում էին այնպիսի առասպելական քաջագործութիւններ, որ անհաւատալի են թուում Սամանի, Ռոստոմի եւ մինչեւ իսկ Հերակիլ նկատմամբ: Պատմագիրը յիշում է երկու օրինակ: Տողքը ձեռք գարկում որձաքար վէմերին, այնպիսի սալերի, ուր Ճեղքի հետք անգամ չէր նշարուում, եւ Ճեղքում էր քարը, ինչպէս եւ կամենում էր. յետոյ եղունգներով քերում էր, յղկում ինչպէս տախտակ եւ հենց եղունգներով էլ փորագրում արծիւ եւ նման պատկերներ: Հստ միւս առասպելը, միանգամ Տողքը Պոնտոսի ափերին պատահում է թշնամու նաւերին, դիմում է նրանց վերայ, բայց չի կարողանում հասնել, նաւերը հեռանում են մօտ 8 ասպարէզ. այն ժամանակ հսկան վերցնում է բրաձեւ մի վէմ եւ նետում նաւերի ետեւից: Զուրը պատառուում է եւ նաւերից շատերը ընկղմում են, իսկ մնացեալներն ուժգին ալեկոծութիւնից վարուում, քշուում են հեռու շատ եւ շատ մղաններ<sup>1</sup>:

Ալեւոր հնութեան այս թանգ աւանդը, Տողքի առասպելը, Տշմարիտ է, գիտական ուշագրութիւնից չէ սպրդած եւ քանիցս նիւթ է եղել քննութեան, բայց հզած մեխութիւնները տակաւին հեռու են հաւանականութիւնից եւ խնդիրը սպասում է աւելի համագիրը լրսաբանութեան: Հսնգուցեալ Ք. Պատկանեանը կարծում էր, որ Տողք անունը թուրք ազգութեան վերանունն է, էպոնիմը, եւ կարելի է նկատել իր ակնարկ հին թըքական գաղթականութեան: Տողքի արտաքինը, մասնաւանդ տափակաբիթ մակդիրը տարօքէն յարմարում է թաթարական ցեղի նկարագրին, ինչպէս տեսնում ենք հետագայ գարերի հայ մատենագրներից, եւ թէեւ Պատկանեանը ընդունում էր, որ հսկայի յատկութիւններից գլխաւորը, տգեղութիւնը, արգիւնք է Անգեղ անուան հայ մեկնութեան ըստ ժողովրդական ստուգա-

<sup>1</sup> Խորեն, Բ, 8.

բանութեան, բայց եւ այնպէս դիպուածական բան չէր համարում Տորքի թաթարական կամ նոյնանման պատկերը<sup>1</sup>:

Պատկանեանի հայեացքը սերտ աղերս ունէր Մորդմանի յօդուածի հետ, որ լզս էր տեսել մի քանի տարի յառաջ եւ նայում էր հայ-թրքական լեզուական առնչութեան հարցին<sup>2</sup>: Գերման գիտական այն միտքն էր յայտնում, որ հայ լեզուի մէջ նշարուում են տուրանական ագդեցութեան անժխտելի հետքեր: Խոպքը, հարկաւ, այն թրքական բառամթելքի մասին չէր, որ ողղում է արդի խօսուն լեզուն եւ որ բնական հետեւանք է դարաւոր դրացիութեան եւ միասնական կենցաղի: Մորդմանն ի նկատի ունէր այնպիսի բառական գանձեր, որոնց գոյութիւնը հայ լեզուի մէջ վկայուած է Դիլ գարերի գորութեան յիշատակարաններով, ուրեմն մի այնպիսի ժամանակ, երբ սեղուկների, թուրքերի եւ նման ցեղերի մասին խօսք անդամ չէր կարող լինել:

Պատկանեանը քննութեան առնելով Մորդմանի բերած բառերը, դանում է, որ գրեթէ բոլորն էլ պարսկական ծագում ունին եւ ուրեմն ոչ մի արժեք ինդրի վերաբերմամբ: Ժխտելով հանդերձ այս բառերի պիտանութիւնը, Պատկանեանը չի ուրանում Մորդմանի հայեացքի լըջութիւնը իրերւ գիտական տեսութիւն եւ իր կողմից եւս բերում է քանի մի բառեր նոյն միտքը հիմնաւորելու նպատակով: Հայերէնի եւ Թուրքերէնի լեզուական խնամութիւնը, նրա կարծիքով, կարելի է մեկնել նրանով, որ հնում, գէթ նախ քան արաբական շըջանը, որեւէ թուրքական գաղթականութիւն է տեղի ունեցել դէպի հայաստան եւ ժամանակի ընթացքում ձուլուել հայերի հետ: Աչա այս պատմական եղելութիւն է, որ արձանացած է համարում հայ ժողովուի յիշողութեան մէջ ի դէմա Տորք առասպելական հոկայի<sup>3</sup>:

Սոր եւ միանդամայն անսպասելի կարծիք յայնեց Պրոֆ. Խալաթեանը իր մագիստրական աշխատութեան մէջ<sup>4</sup>: Նա կասկածում է, թէ որ աեղից կարող էր մեր պատմագիրը քաղել Անգեղ տան մասին այնպիսի հնագրական եւ ցեղաբանական մանրակիրտ տեղեկութիւններ, որ տեղից կարող էր իմանալ, որ Անգեղ տան նախահայրը Տորքն է, որ ապրում էր Բ. գարում ն. Ք. կամ որ Տորքը ծագում է Հայկակի թոռ Պատքամից իրը 600 տարի յառաջ քան Տորքը: Այսպիսի տարակուածների մէջ է յայտնում նաեւ Գարագաշեանը<sup>5</sup>: Երկու հայ գիտնականները չեն վարանում նաեւ, որ Անգեղ բառի ստուգաբանութիւնը մտացածին է եւ խորթ հայ լեզուի ոգուն: Հսկայի ուժեղութեան վերայ աւելացնում է պատմաբանը եւս այլանդակութիւնը, որ արդարացնէ Անգեղի իր տգեղ նշանակութիւնը: Խալաթեանի կասկածութիւնը վտանգում է նաեւ առասպելների վաւերականութեան: Առաջին առասպելը, նրա կարծիքով, կատարեալ անհեթեթութիւն է, որովհետեւ քարի վերայ պատկերներ նկարելու կարողութիւնը ենթադրում է որոշ կրթական գեղարուեստական պատրաստութիւն որ բնաւ անյարիք է հրէշաւոր հսկայի հիմնական նկարագրի հետ: Տորքի միւս առասպելը — բըրի նման խոշոր քարեր ձգելը նաւերի

<sup>1</sup> Паткановъ, О мѣстѣ, зависимомъ арм. языкомъ въ кругу индо-европейскихъ, Тифлисъ, 1879.

<sup>2</sup> Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft.

<sup>3</sup> Անդ:

<sup>4</sup> Армянскій Эпосъ въ исторіи М. Хор. Москва, 1896.

<sup>5</sup> Քննական Պատմութիւն, Ա. էջ 250.

վերայ — իրօք արտայայտում է հսկայական ոյժ, բայց այնքան է յիշեցնում չումերոսի Պոլիկեմի նոյնանման քաջագործութիւնը, որ ստիպում է ենթադրել, որ Խորենացին պարզապէս փոխ է առել հռչակաւոր կիկլոպի առասպելը որեւէ յունական շըջեկ ժողովածուից: Պ. Խալաթեանը յառաջանալով բացասում է մինչեւ իսկ Տորք անուան պատմական ստուգութիւնը: Եւսերիսի ժամանակադրութեան մէջ, ոլիմպիական ըմբիչների ցուցակում, յիշուում է ի միջի այլոց ոմն Տորքոս կողոփոնացի, որ 145 ոլիմպիական յաղթող է հանդիսացել մացակուում:<sup>1</sup> Թէեւ յաւնական բնագրում կարգացուում է Մոսքոս, Մօսչօս Կօլօֆայուս, փոխանակ հայ թարգմանութեան Տորքոսի, բայց այդ հանգամանքը յետ չէ կասեցնում Խալաթեանին գայթակղիչ համեմատութիւնից. եւ ենթադրում է որ Խորենացին այստեղից է վերցրել Տորք անուանը եւ յերիւրել նրա անուամբ առասպելներ: Հայ ընթերցումը աղաւաղութեան արդինք է համարում, մի աղաւաղութեան, որ տեղի է ունեցել Խորենացուց յառաջ, ուստի եւ Տորք անուան գոյութիւնն իսկ հայեացքը է համարում է համարում, մէջ նկատում է իրը պարզ թիւրիմացութիւն<sup>2</sup>:

Պատկանեանի կարծիքը մի տոսկ ենթագրութիւն է, որ իրական խարիսխ չունի ոչ պատմական եւ ոչ լեզուական գիտութիւնների մէջ: Հայ-թուրքական լեզուական առնչութեան խնդրով ներկայում զբաղուում է պ. Հ. Պեղերսենը: Սորա հայեացքները տարբեր են Պատկանեանի տեսութիւնից: Այն բառերը, որոնք ընդհանուր են հայերէնի եւ թուրքերէնի մէջ, Պեղերսենի քննութեամբ, զուտ հայկական են եւ հայերէնից են անցել թուրքերին. նա փորձում է մինչեւ անդամ որոշել փոխառութեան ժամանակը իրը 500 տ. ն. Ք.<sup>3</sup>:

Այս խիզախ հայեացքը դեռ եւս պէտք ունի աւելի հաստատուն եւ յուսալից հիմունքների: Յարգելի գիտնականը «անհիմն է համարում այն կարծիքը, որ հայերէնի բառագանձը բաւականին ազդեցութիւն է կրած օտար լեզուներից», եւ վատահանում է պատմական ապահովութիւն է կրած օտար լեզուներից»: Եյսօրինակ թերի կամ միակողմանի ըմբռնումով՝ հայ լեզուի բարդ կազմի հանդէպ, մանաւանդ այժմ, երբ արդէն յաջողուում է լեզուական պեղումով վեր հանել հայ լեզուներին շերտերը, այն հին տարբերը, որ կապում են հայերէնը վերական լեզուական հայերէնից հետ, հարկաւ, գժուար է յանգել անվեճելի հետեւանդների առաւել եւս այնպիսի առեղծուածային խնդրիներում, որպիսին է հայ-թուրքական լեզուների խնամութիւնը: Յամենայն դէպս, այս խնդրին նայող տեսութիւններն առ այժմ աւելի քան տեսութիւններ են, տակաւին մաքի մառախուղներ եւ ոչ մի գիտական կոռան չեն կարող ընծայել թուրքական հին գաղթականութեան հարցը պաշտպանելու: Սորանով եւ Պատկանեանի կարծիքը Տորքի մասին մնում է օդի մէջ առանց նեցուկի:

Անցնելով Պ. Խալաթեանի գատողութեան, պէտք է նկատել, որ ինչ վերաբերում է Տորքի եւ Անգեղի յարաբերութեանը, անպայման ճշմարիտ է: Ամենայն իրաւունքով կարող ենք զատել Տորքն Անգեղից եւ Խորենացու մեկնութիւնն նորա լեզուաքննական ճաշակի պտուղ համարել: Իսկ այն ենթադրութիւնը, որ Տորք

<sup>1</sup> Եւսեր. Կես. Ժամանակ. Ա. էջ 30. «ի մանկաւոյ բռնամարտիկ կոռուին՝ Տօրքոս կողոփոնացին միայն ի մանկութեան ի ըքանական մարտիկ յաղթեաց:

<sup>2</sup> Խալաթանց, անդ, էջ 326 եւ հետա:

<sup>3</sup> Pedersen, Armenianisch und die Nachbarsprachen, KZ. XXX. Հայերէն թարգմ. Աղդ. Մատենաց գաղթական ծրբ. «Հայերէն եւ գրաբի լեզուները», թարգմ. Կետիկեան. Անդ:

անունը իբրեւ թէ փոխառութիւն է եւ ըմբիշ աղաւաղած անունը, անպայման անընդունելի է եւ միանգամյն խոտելիք: Կարելի է համաձայնել, որ Տորքին վերագրած առասպելները շինծու են, կարելի է թերեւս Խալաթեանցի առարկութիւնը հսկայի փորագրելու ընդունակութեան վերաբերեալ ուղղել ի նպաստ նորա հիմնական մոքի, ենթադրելով, որ պատմաբանը Անգեղ բառը կամեցել է մերձեցնել Անդի բառին, ուստի եւ հսկային վերագրել է արծիւ նկարելու կարողութիւն. այս բոլորը, կրկնում ենք, հնարաւոր է, զույց եւ հաւանական, բայց կարծել, որ Տորք անունն իսկ թիւրիմացութեան ծնունդ է, բանաւոր հիմք չկայ: Խորենացու յերիւրանքները, ըստ Խալաթեանցի, միշտ միտումաւոր են եւ կատարուում են որոշ նպատակով: Այս գեպքում, անհասկանալի է, թէ ինչ խորհրդով է պատմաբանը գողանում անյայտ ըմբիշ անունը եւ նրան վերագրում ստայօդ քաջագործութիւններ: Եւ որպիսի ձախորդութիւն. հարիւրաւոր անուններից վերցնում է հէնց այն, որ աղաւաղած է (Տորքոս փոխ. Մոսքոսի): Թուում է, թէ Տորքի եթէ ոչ աւանդութեան գեթ անուան պատմական իսկութիւնը ժիտել ծայրայեղ կասկածամութեան արդիւնք է: Այդ անունը ծանօթ է Խորենացուն, անշուշտ, հայ կեանքից. հաւանական է նաեւ, որ հսկայի պատմերն իր հրէշաւոր գծերով էապէս առնուած է հայ իրականութիւնից: Այսպէս ինչու պէտք է պատմաբանը մի պատմահական ըմբիշ անունը կապէր հայութեան քաջածանօթ Անգեղի հետ եւ նրան ընծայէր նշանաւոր իշխանական տան նախահայրութեան պատմիւր:

Անգեղ իսկապէս աշխարհագրական անուն է, ծոփաց աշխարհի գաւառներից մինը, որի կենդրոնական ամրոցը մինչեւ այժմ էլ պահել է իր հին անունը, Անգեղ, տաճկական արտասանութեամբ էզիլ: Հին հայերը իրաւամբ կարծում էին, որ Անգեղ աստուծոյ անուն է եւ նոյն այն Անգեղի հետ, որ յիշուում է Ս. Գրքի հայ թարգմանութեան մէջ, իբր համազօր բնագրի Ներգալ-ին<sup>1</sup>: Մար-Աբասեան պատմութեան անանուն հեղինակն եւս գիտէ, որ Անգեղն աստուածութիւն է<sup>2</sup>: Կարելի է ենթադրել, որ Աստուածաշնչի Անգեղը յունական բնագրի Ներգել աղաւազումն է Շղն Վերշուր, բայց աւելի ընդունելի է, որ անգեղը տեղական ձեւ է նոյն Ներգալ անուան: Սեմական Սարգալ իբր պաշտամունք մօտ է յունական Հերակլէսին. սորա ստուգաբանութիւնը եւս մութ է եւ դժուար թէ հնարաւոր լինի մեկնել յունական հողի վերայ: Արգեօք Հերակլ-էս, մանաւանդ Հերկուլ-էս ձեւը, չէ ծագում սեմական Սարգալց, եւ կամ հայ անգեղ, յոյն հերկուլ, եւ սեմ. Նարգալ միեւնցն բառի տարբեր արտայայտութիւններ չեն: Յամենայն դէպս Անգեղը նոյն է Ներգալ հետ եթէ ոչ ստուգաբանօրէն գեթ նշանակութեամբ: Անգեղ ամրոցն իր անունը պարտական է նոյնանուն աստուածութեան, երեւի, այնտեղ գանուող տաճարի պատճառով: Արշակունիք մեծ կարեւորութիւն էին տալիս Անգեղ բերդին. սա յայտնի էր իբրեւ արքայական հանգատարան, ունէր մեծ հարստութիւն. Անգեղ տան իշխանը բարձով վեր էր բոլոր նախարարներից<sup>3</sup>: Երեւում է, որ Անգեղն հնուց ի վեր նուիրական վայր է եղել, շնորհիւ Անգեղի տաճարի, եւ նրա հոչակը չէ նսեմացել նոյն իսկ քրիստոնէութեան ժամանակ: Խորենացին Անգեղը նոյնացնում է Տորքի հետ,

<sup>1</sup> “Եւ արք Քութայ արարին զԱնգեղ, ոչ ով անձօւս Խօսթ էպօնոսաւ Ռուգել. Խալատաւ, թ. 84.

<sup>2</sup> Անգեղոս, էջ 6. Վասն զի կոչեցաւ Քագարատ եւ Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին:

<sup>3</sup> Փաւատոս, թ. 24.

իսկ անանուն հեղինակը Անգեղ համարում է Բագրատունեաց ժառանգութիւն եւ նոյնանիշ Բագրատատ անուան: Վերջին համեմատութեան առիթ է տուած գուցէ “բագ”, բառի նշանակութիւնը, որ լաւ ծանօթ էր մեր հին հեղինակներին (Հմետ. Բագրատատ — գիցաւան, բագին — մեցեան եւայն): Իսկ Անգեղը եւ Տորքի շաղկապման հիմն որոնելու է նրանց էութեան նմանութեան մէջ, այսինքն, որ երկուսն էլ գերբնական ոյժերի, աստուածութեան գաղափարներ են:

Յայտնի է, որ հաթեան ցեղի բազմաթիւ աստուածների մէջ առանձնապէս հոչակուած էին երկուսը, իր ազգային աստուածներ, տարկու եւ տիշուապ, տարզու, տիշուր. Երկուսն էլ տարածուած պաշտամունք էին ամբողջ Առաջաւոր Ասիայում: Ենաէն հնարաւոր էր գտնում հաթեան ազգութիւնները բաժանել երկու մեծ խմբի, մէկը՝ տարկուի երկրպագու, միւսը աիշուապի (թէեւ գիտնականների կողմից հաւանութիւն ցտան<sup>1</sup>): Տարկու աստուածն ընդունուած էր նոյն իսկ Քասիդների մօտ հաւասար թելին<sup>2</sup>. Նրա կուլտը ընդհանուր էր Պարսկաստանէ մինչեւ Փոքր-Ասիայի հեռաւոր ծայրելլը: Տարկուի երրեմնեան փառքի հետքերը մնացել են մի շալք յատուկ անունների մէջ, որոնք պատահում են Ասիայի հինաւուրց ազգութիւնների մօտ. ծղմօս Տրօնօն ծղմօս Փութիւգիում, Տարկու ծղմօս Կարիայում, Տարկու ծղմօս Կիլիկիում<sup>3</sup>: Ասորական սեպագիր արձանագրութեանց մէջ կարգացում էն՝ Tarkudimme, թագաւոր Միտանի պետութեան<sup>4</sup>, Tarhundaradus թագաւոր Արծիպի (որ համեմատուում է Հայոց Արծափ տեղի հետ<sup>5</sup>) Tarhunazi, թագաւոր Մելետինի, վերջապէս Tarhuna, Tarhunabę, լեռան անուն նայիրի երկում, այսինքն Հայաստանի հարաւային մասում, Եփրատից մինչեւ Վանայ ծովը: Այդ անունը կենդանի էր գեռեւս Բիւզանդական շրջանում. Զենոն կայսեր դէմ եղած զրապետներից մէկի անունը Տրօնօնցէ էր:

Ուշագրութեան արժանին այն է մանաւանդ, որ հաթեան աստուածութեան անունը պատահում է Հայաստանի այն մասում, ուր ընկնում է նաեւ Անգեղ գաւառը, հին Մայիրի աշխարհում: Ազգային աւանդութիւնը, կապելով Տորքը Անգեղ աստուածութեան հետ, մեզ հիմն է տալիս կարծելու, որ Տորքը ոչ այլ ինչ է եթէ ոչ հինաւուրց Տարկուն. եւ ուրեմն յիշեալ անուանց շարքը կարող ենք հարստացնել, ներմուծելով եւ Հայոց Տորքի իրեւ մի յարգի աւանդ ալեւոր հեռաւութեան: Մեկնութեան բնաւ կարօտ չէ, թէ ինչու հեթանոսական հզօր աստուածը Քրիստոնէական շրջանում պահպանուել է Հրեշաւոր էակի այլանդակ, բայց եւ այնպէս զրաւոր պատկերով: Կրօնական մօքի նյոնօրինակ բեկման արդիւնք է դեւ բառը, որ արիական լուսաւոր աստուածութեան գաղափարից դարձել է չարութեան եւ խաւարի ոգի: Նաեւ հնչական խօչընդուտ չի կարելի յարուցանել tarqu եւ Տորք բառերի (tork, \*taurku) նոյնութեան նկատմամբ:

Ի՞նչն է կապել Տորքն Անգեղի հետ, արդեօք լոկ աստուածութեան գաղափարը, թէ մի այլ հանգամնք, մնում է մութ: Մեր համեմատութեան ճշմարտութեան տպացոյց կալող է համարուել այն պարագան, որ հաթեան միւս աստուածութիւնը

<sup>1</sup> Ed. Meyer, Geschichte des Altertums, I, p. 626. 2. Aufl. 1909.

<sup>2</sup> Hommel, Grundriss der Geographie und Geschichte des alten Orients, 1904, I, p. 44.

<sup>3</sup> Kretschmer, Einleitung in die Geschichte der griechischen Sprache, p. 362 եւ հետ.

<sup>4</sup> Hilprecht, Assyriaca, p. 119.

<sup>5</sup> Hommel, ib. p. 45.

ուշադիր նմանապէս քարացել մնացել է հայ իրականութեան մէջ իբր աշխարհագրական անուն Ծոսպ, Tospitis, անշուշա ի յիշատակ նրան նուիրած գլխաւոր տաճարի. ուրեմն, այնպէս, ինչպէս Անգեղ աստուածութեան անկունը անդրադարձել եւ յառել է որոշ վայրի վերայ: Եթէ Անգեղ տեղը հնագիտորէն հետազոտուի, պեղումները կարող են երեւան հանել այնպիսի իրական յայտնութիւններ, որոնք գուցէ եւ պարզեն, թէ ինչ են նշանակում այն արծիները, որ Տորբին փորազրել է տալիս մեր պատմաբանը, արդեօք հաթեան վեմական յիշատակարաններից յայտնի արծուէնկարների հետ կապ չունին:

Սորերս Պրոֆ. Մառը մի ուշագրաւ յօդուածում ցոյց տուաւ հայերէն աստուած մինչեւ այժմ անմեկնելի բառի ազգակցութիւնը Փոխւղական Տաթաչուու աստուածութեան հետ<sup>1</sup>: Թէեւ բառիս ստուգարանութիւնը տակաւին մութ է եւ մինչեւ իսկ յայտնի չէ թէ արիական ծագումն ունի, թէ այլ, բայց անտարիակցս է, որ Սարաձիուը համբաւուած աստուած էր թրակա-փոխւղական աշխարհում: Որտեղ է ծաղկել նրա սկզբնական կուլոր, Թրակիայում, որտեղից անցել է Փոխւղիա, թէ հակառակը, դժուար է վճռել: Յամենայն դէպս հայերը ծանօթ են եղել աստուած Սարաձի-ոսին Փոխւղացիների միջոցով: Այս մի կարեւոր յայտնութիւն է, որով հաստատում է Հայոց եւ Փոխւղացւոց այլուստ վկայուած ազգակցութիւնը: Ասել է թէ, աստուած-Տաթաչուը հնդեւրոպական ծագում ունեցող հայերի սպաշտամունքն էր, հայկական ազգի այն տարրերի, որոնք ցեղակից էին Փոխւղացիներին: Մինչդեռ Տորբ աստուածութիւնն ընդունած էր տեղական հին բնակչութեան մէջ, հայութեան այն տարրերի, որոնք ուրարդական-հաթեան ազգախմբին են սպատիանում, եւ հարեւան վերական ցեղի ազգութեանց հետ կազմում են մի ընտանիք: Այլ կերպ ասած, մէկն արմենների պաշտամունքն է, միւսը — հայերի, պատմական հայութեան երկու բաղկացուցիչ մասերի տարբեր պաշտամունքը: Այն հանգամանքն, որ արմենների աստուածը խոր եւ ծաւալուն հիմքեր է ձգել, ցոյց է տալիս, թէ որպիսի վճռական նշանակութիւն են ունեցել հնդեւրոպական արմենները պատմական հայութեան իբր մի ազգութեան գանգման շաղաւի մէջ:

Ս. Պետերբուրգ, 31 Հոկտեմբերի 1911:

<sup>1</sup> Եօրե Տաթաչու յ արման. Bulletin de l'Académie Imp. des Sciences de St. Pétersbourg, 1911  
p. 759 (թարգմ. Աբարատ, 1911, էջ 794—799):

25. Մաքսուն դայ Ս. Վ.: Զէյթոնի բարբառի ձայնական դուլթիմը:
26. Բադրուպան առաջ Պրոֆ. Վ. Հայերէն “իմանամ”:
27. Գագան առաջ Վ. Հայերէնէ փոխանակ բառեր թթերէնի մէջ:
28. Jensen Prof. Dr. P.: Hittisch-armenisch (= Ես առ ա Պ. Հիտիտներէն-հայերէն):
29. Ակի առաջ Վ. Ն. Թովհաննէս Կաթողիկոս Օճնեցւոյ նորագիւտ գոռւածք մը Բանին մարմաւրութեան վրայ:
30. Strzygowski Prof. Dr. J.: Ein zweites Etschmiadsin-Evangeliar (= Ստրիցովսկի Առաջին Վ. Եթիւրող Էջմիածնի աւետարան մը):
31. Բասմաջան առաջ Վ. Յ. Զաքարիաս սարկաւագի “Կոնդակը”:
32. Bittner Prof. Dr. M.: Einige Kuriosa aus dem armenischen Dialekte der Walachei und der Moldau (= Մ. Բիտներ Հունգարանայոց եւ Լեհանայոց բարբառէն նևտարործական գծեր):
33. Կիւրիկ առաջ Վ. Բարգան Եպ: Դիտողութիւն մը հին հայերէն թարգմանութեանց մասին:
34. Փերի առաջ Վ. Պ. Մարկոս Աւետարանի Ժ. 9-20 համարները Հայոց քով:
35. Սրապ առաջ Վ. Ի. Հայր ի Խարասուգազար:
36. Lidén Prof. Dr. E.: Ein Beitrag zur armenischen Lautgeschichte (= Լիդեն Վ. Հայերէն հնչաբանութեան նպաստ մը):
37. Առնեց Վ. Տորբ աստուած հին Հայոց:
38. Գառիթ-Բեկ Մհեր Ս. Հայերէնի կեղուի բարբառներու նետ անչութիւնը:
39. Karst Prof. Dr. J.: Zur ethnischen Stellung der Armenier (= Կարստ Յ. Հայոց ազգազրական դիրքը):
40. Մատիկեն առ Վ. Սարարադ թէ Աբարատ:



"Յուշարամին, զիսն է"

Թղթակազմ	ֆր. 40.—	Broschiert	Քր. 40.—
Կհասկացի	„ 45.—	Halbfranz	„ 45.—

Preis des „Huschardzan“:

*Մեր հասցե՝ — Unsere Adresse:*

*Rédaction de la Revue „Handes Amsorya“*

Vienne (Autriche), VII/2 Mechitharistengasse 4.

ԱԿ

4958

2013



